

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշխրոյ համար	12 ֆր.
սարեկա՛ւի	7 "
վեցամս'այ	7 "
Արսասահմանի	
համար սարեկա՛ւի	15 ֆր.
վեցամս'այ	8 "
Անեհիկայի համար	
սարեկա՛ւի	3 ֆր.
վեցամս'այ	1.50 "

Ծանուցում տղը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Երեսին առաջին սանթիմերու համար 20 0/0 զեղջ կը լայն:

Կամեայի համար ձեռք 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ԾԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРИЯНЪ

Նամակ եւ դրամ դրկիչ խմբագրութեան հասցիքի

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշխրոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏՈՐԻ Հ. Յ. ԳԻՆՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԷՁ»

Յուլիսին այս անունով մի բըրօշիւր պէտք է յանձնվի տպագրութեան:

Բըրօշիւրի նպատակն է, առանց խճճանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ գնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց: Ինչպէս է որ բըրօշիւրի մէջ փաստող դոկիւմանտները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բըրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.:

Դիմել Նարթուսի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիեննա քաղաքի Ժողովրդական հայերէն թերթեր: Ան հասարակ բոլոր հայ կամ արեւելիցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ըստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԴԵՐԵՐԸ ՈՐՈՇԵՆՔ

Նախորդ յօդուածում մենք շեշտեցինք թէ տաճկահայ յեղափոխականը ինքը պէտք է վարիչը լինի իր երկրի պատագութեան գործի: Իսկ միւս հայերը—առուսահայ և այլն միայն օժանդակներ: Իսկ այս հիմնական պատճառով որ տաճկահայը աւելի ծանօթ է իր երկրին, բոլոր պայմաններով միասին, և աւելի նպատակաշարժար գործելակերպ ստեղծել և ծրագրի կարող է

կազմել: Դա այնպիսի մի ճշմարտութիւն է որի դէմ հակառակելու համար բարցարձակ անմիտ և ապուշ պէտք է լինել:

97 թւականին Պոլսոյ բոլոր տեղական գործիչները հակառակ էին Բարաւիլի առեւթը նետելուն: Լու տեսնելով որ ընդհանուր ներումներից յետոյ սկսել էր համաժողովան մի խաղաղութիւն որի միջոցին թէ ժողովուրդը շունչ կարող էր առնել և թէ կազմակերպութիւնը կարող էր զօրաւոր պատրաստութիւններ տեսնել: Բայց միայն Արեւելեան Իրիւրոյի ճնշմամբ և մի ուսահայ գործիչի բարոյական բաւր տեղի ունեցաւ: Կազմակերպութիւնը քարուքանդ եղաւ, բռնութիւնները սաստկացան: Իյդ իմարութիւնը այնքան սարսափելի ազդեցութիւն էր թողել, որ էյուար (Վաւա Բէնտիբեան) Բրիտանոսի հետ Սօֆիայում մահացած ընկերը, իր ընկեր Լ. զասէրին, նոյնպէս Պոլսոյ գործիչ, գրում էր... «Ատոնք բացարձակ ուսական գործիքներ կերելին կարծես: Կարգարկաւ պայքար սկսելու է...» Ի դէպս, զարմանալի զուգահեռութիւն... հա՛ւառակ ուղղութեան այդ երկու տիպերը էյուար (Բէնտիբեան) և Բրիտանոսի մահանում էին միեւնոյն օրում և նոյն ում: Բով: Էյուար արտասահման էր գալիս Դաշնակցութեան Խորհրդի մէջ Բրիտանոսի ուղղութեան հակառակ դիրք բռնելու և տեղացիների իրաւունքը պաշտպանելու համար, և հակառակ Բրիտանոսի ցանկութեան:

Խանասորի արշաւանքը իր ձեւով տեղի է ունենում հակառակ տեղացի և նրանց պէս Լտաճող առուսահայ գործիչների, որով հետեւ այդպէս է եղել հրամայված կովկասից: այսինքն Բրիտանոսի կողմից...

Այսօր Անգրանիկ յայտարարում է: «Լեւելի լաւ էր որ Դաշնակցութիւնը մեզ երկրի մէջ զէնք և դրամ հասցնէր, բայց

ոչ խմբեր, հրոսախմբեր այն էլ փոթորիկը պայթելուց յետոյ: Մինչդեռ այս պահանջին բոլորովին հակառակն է տեղի ունենում:

Այս բոլորից պարզ երեւում է թէ տաճկահայ յեղափոխականի առաջին պարտականութիւնը պէտք է լինի իր ուժերը համախմբել: Անցեալ յօդուածում շեշտեցի թէ հնչակեան երկու հատուածները պարտաւոր են առանձնապաղման ձուլվել: Այդ կուսակցութեան բաժանումների գըլխաւոր պատճառներն էլ տարբերի և դերերի շփոթումից է առաջացել: Առաջին բաժանումի պատճառներն են Բրիտանոսի և Նապոլէոնի, ինչ որ ըստ երեւոյթի տեսական, բայց ներքուստ եսական, իշխելու, խնդիրների պատճառով, որոնք ոչ մի կապ չունեն տաճկահայ ազատագրութեան գործի հետ: Հնչակեան երկրորդ պատճառումը տեղի ունեցած է նոյնպէս կեդրոնի առուսահայ և տաճկահայ անցածների դէպի իրար տաճած անվստահութիւն, նկարագրների, մտածումների տարբերութիւն: Ես համոզված եմ որ երկրորդ միացումից յետոյ, եթէ կենտրոնի մէջ լինէին տաճկահայեր, ի հարկէ մաքուր և անձնագոհ տիպեր, երկրորդ պատճառումը այլեւս տեղի չէր ունենայ: Հնչակեանութիւնը պէտք է ձուլվի, զա հրամայողական պահանջ է մանաւանդ որ այլեւս նրանցում չկան նազարբէկեաններ և Արիփարներ: Զուլում Հնչակեանութիւնը իր ներքին գործերը կարգադրելուց յետոյ պէտք է գնէ իր պահանջը Դաշնակցութեան առջեւ: այս տեղ էլ առաջին բաժանման—հետոյ—Բրիտանոսի գոյութիւն չունի... և եթէ հակառակորդներ էլ գտնվեն, այն ժամանակ Դաշնակցութեան մէջ գրտնուղներից շատերը կը թողնեն այդ կուսակցութիւնը: Ի հարկէ նրանք որոնք ուզում են ծառայել տաճկահայ ազատագրութեան գործին, և չեն զեջաւարվում

միայն ոտնիկ ստանալով և իրենց գոյութիւնը քորշ տալով:

Վերջի ընդհանուր ժողովում, հակառակ Վաւաեանի պոռչկըտուքներին, հակառակ Բրիտանոսի արհամարանքին դէպի միւս կուսակցութիւնները, անցաւ իմ գրած բանաձեւը «համերաշխութիւն բոլոր մաքուր հայ յեղափոխականների հետ մանաւանդ երկրում»: Մինչդեռ ժողովի մէջ Վաւաեանի և ուրիշների միջոցով պարսաւանք և նկատողութեան քիչ տալու պատրաստութիւն էր տեսնվել ինձ համար, որ ես թող էի տեղ ինձ Հնչակեան բանախօսութեան նախագահել, հնչակեան ներկայացուցչի հետ բանախօսել և վերջապէս «ճիւղը» գործել ըստ Վաւաեանի և Թիլիպէցիների, հնչակեան ներկայացուցչի հետ Շումլայում գրամ հանգանակել: Իմ անցրած բանաձեւով արդէն օրինական սանկցի տրվեց իմ ոճի բերին ինչպէս կարող էր ասել մի Վաւաեան, կամ Պիոնեան կամ Անտոն...:

Եթէ Հնչակեանութեան այն ոչ այնքան փայլուն օրերում կարելի էր համերաշխութեան բանաձեւ անցնել—որոշում կորուզել, այժմ մանաւանդ ձուլված Հնչակեանութիւնը աւելի մեծ յարգանքի և վստահութեան կարող է արժանանալ: այդ շատ բնական է: Մանաւանդ հիմա ուժերը—խօսքս երկրի տաճկաստանի մասին է, գրելով միեւնոյն է...

Տաճկահայ ուժերի համախմբումը կուրենայ և իր երկրորդ ու ամենամեծ առաւելութիւնը: նա կարող է որոշել կովկասեան պաշտպանողական գործունէութեան և տաճկահայ ըմբոստ գործունէութեան սահմանները, ու կը պակսեցնէ կովկասահայ պատգամաւորների թիւը, որոնք օգտուելով միայն ձայների շատութեամբ, ճակատագրական որոշումներ են տալիս մի երկրի գործունէութեան համար, որը նրանց համար Զինաստանից և ձարոնից աւելի անծանօթ է... ՎԱՐԴՈ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԷՆ

(Բարա—Գասպար—Խաժակ)

Հնարաւորութիւն չունենալով Պարիզում հրատարակած թու. ցիկի մէջ ձեր իսկական պատկերը մէջ տեղ դնել ձեր սեփական վրձինով, այսօր կատարում եմ և այդ պարտքս: Հրատարակելով ձեր երեք նամակները՝ որոնցից երկուսը պարզում են ձեր ունեցած կարծիքը Գաշնակցութեան և նրա վարիչներին մասին ու ձեր չափազանց համակրութիւնը դէպի ինձ, շեշտում ձեր վարանումը նիւթական ներկութիւնների առջեւ, փաստում որ մինչեւ ձեր յօդուած գրելը տարի ու կէս էլ չէ անցել ինձ նամակ գրելուց, վերջապէս պարզում ձեր կարծիքը Գրիտափորի մասին և արժէքը այն արցունքների որ թափեցիք նրա մահւան րոպէներում, անշուշտ թեւեղ տակ հոռմի լուկան կանանց սրականերից աւելի խոշոր սրակ բռնելով, լաւ վարձատրութիւն ստանալու համար...

ՎԱՐՂՈ

Պ Ք. Միքայէլեան!

Ստացայ Ձեր ապրիլ 8 ի նամակը ինչպէս կը վարւի նրա հետ—այդ իմ գործն է: Այսքանը միայն կասեմ, որ ես երբէք չեմ այնքան ստորանալ, որ մարդկանց հետ ուրիշ հայտնի միտքային գամէն—ի նման... Այդ վարմունքը խիստ սազ է գալիս ձեզ:

Յօդուած գրելու ժամանակ ես աչքի առաջ եմ ունեցել մի ամբողջ դասակարգ, իսկ եթէ դուք ձեր պատկերն էք տեսել նրա մէջ՝ այդ իմ

Մ. ՅՈՒՆԱԿ

ԱՐՑՈՒՆԻՔՆԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐ

ՊԱՏՐԱՆՔԸ

(Բարիքահայ կեանքէ)

Ինչոր մարդոց դէմքերը ճշմարիտ են, ինչ ալ իրենց ձեռքերն ըլլան.

Այլ չկայ երբէք ճշմարիտ կին մը՝ ճշմարիտ դէմքով:

ՇԵՅՄԱՅԻՐ

Ա.

Երիտասարդը հազիւ քսանը անցած՝ կայտառ կազմով, վայելուչ հասակով, մի քիչ թուխ ալ եւ լի ու կլորակ այտերով քաջաոգով մէկու մը տպաւորութիւնը ունի Սեւ յօնքերուն եւ սեւ աչքերուն բոլորովին համապատասխան են լայնեզր ամբրիկեան իրիպիինքիտակէն թափուող եփենոսագոյն մազերը:

Հազիւ մի քանի սանդուխ վար իջած՝ քարացած ի նման կանգ կանոնէ եւ շուարած ու շփոթած՝ կը դիտէ շուրջը: Մէկ քանի օրիորդներ, անցնելով մօտէն, իր միապաղաղ ու տարօրինակ ձեւէն ազդուած, սուր քե-

մեղը չէ: Յիշեցէք կոխովի «Հայելին» ու կապիկը...

Կարճակերպական խնդիրներում մասնակցելու կամ չմասնակցելու հարցը դուք էք ներս խոթում: Դեռ 90 թւից ես ձեր ճակատին գրոշմել եմ իմ ասելիքներս և մոռացել ձեր գոյութիւնն ու ձգտումները:

1899 թիւ Ապր. 3/15 Վառնա

Միքելիս! (Ինձ ուղղած)

Վերջապէս վճռում եմ նամակ գրել: Մինչև այժմ դեռ յոյս ունէի կրկին թեւ առնել թոյլի... Բայց մէկ երեխան կայ. երկրորդն էլ ճանապարհին է. տոյժ արգէն զգում եմ, որ կապուած եմ!

Որքան կուզի մի անգամ էլ ամբողջ կուրծքով շնչել... օրէկ օկլիտաթի գրել...

Ո՞վ գիտե՞ս թէ ուր եմ ծառայում: Կարգում ես երեւի կովկասի թերթերը; Հասցէս էլ չեմ ուղիղ խմբագրատան անունով է. որովհետեւ այնտեղ ոտնկո՛ղ ծառայող եմ...

Որքան, որքան գրելիքներ ունի մ. բայց... ո՛հ, այժմ գրել պետք է այդ տեղ լինելի, մէկ-մէկ, ես վաշ-եմ վաշ ասելի, անվերջ թւէի...

Եթէ գալու լինես երեւի այս անգամ անպատճառ ինձ կը հանդիպես:

Մի եկող կար, գծադրարար չը կարողացայ նրա հետ նամակ եւ մի երկու գրքեր ուղարկել քեզ րեցէն զիտ ի համար:

Դրեր քո մասին լրագրի մասին... Երեւի ներթականդ անէ վաճօ՛ղ! Ո՞ր այդ «բողոք» հարցը... Բարոյականութիւն, խիղճ—ամեն ինչ ճշում է այդ լիբր փողը... Դեռ լաւ է, քանի միակ է... իսկ երբ կողմից բուսնում են անմեղ էակներ—ահ այն ժամանակ միայն զգուցի է:

Անվերջ համարներս Քո ՅԱԺԱԿ

1904 թ. Օգ 8 Թիֆլիս

քեռով մը կը դառնան իրեն ու կանցնին: Երիտասարդը, ամօթով եւ յուզումով, կը չի կրնար ու կը զիջէ իր փոփոխակի, հազար փոփոխութիւն խնդրելու նորէն զո՞ղ մը առաւ սիրտը: Արգեօք ի՞նչքան ալ պարտաւոր էր նոյնը ընել, արդեօք ի՞նչքան ալ պիտի օտիպէին... Բայց ո՛չ, շատեր կան առանձին, իսկ ոմանք ալ կը մերտուին, ուրեմն, պէտք էր չըլիլ, զիտել ամէն կողմ, եղածը անցած էր:

Ու սկսաւ դեգերիլ կարողներուն շուրջը: Եւ արք մը գոյգեր, խոմբերու բաժնուած, որպէս թէ քատրիլ կը պարեն: Այն ի՞նչ յայտատութիւններ, այն ի՞նչ լուրի շարժումներ, այն ի՞նչ լպիրշ արարքներ... Արդէն թեթեւ գլուխները, ալքօլի սմանակալ աղղիցութեան տակ, բոլորովին ցնդող էին զարձած ու կը գործէին ինչ որ կը թելագրուէին, կը դիտէր այս բոլորը. բայց երբեմն այն աստիճանի կը շափազանցուէին ասոնք որ ակամայօրէն կրտսիպուէր գլուխը դարձնել շը օտեւած նկատուելու համար՝ յայտ գերակատարներու... Մէկ խոմբը կը թողուր եւ կանցնէր միւսին: Իւրաքանչիւրը իրարմէ յայտատ, իրարմէ վաւաչ, իրարմէ լկտի: Ի վերջոյ եկաւ կանգ առաւ Ենուար անկիւնի մը խմբին քով: Կոս, գլուխներ այն ատիճանի էին տաքացած՝ որ՝ մոռնալով նւագախմբին անձա՞քատրիլը, իրենք իրենց եղա-

Միքելիս Եւջա! (Ինձ ուղղած)

Մարգարե գալիս է. յանկարծ պատահեց... Չափազանց շատ բան կայ գրելու... այնքան է հաւաքել սրտիս վրայ դառնութիւն, որ մի քանի տողերով դուրս թափել անհնար է. երկու տարի է բոլորովին քաշած, առանց որ եւ է յարաբերութիւն մէջ որ եւ է մի գեներալի հետ... կաղ գեներալներ (իմա՛ Գրիտափոր, եւ այլ նման անձաւորութիւններ ուղղակի զգեցրին... մի որթ, մի ճճի մի Աշոտ անգամ վեր կացաւ հայտնիութիւն... Բենիկեան, անհանց որովհետեւ շո զեցի իրանց նման պարագիտ լինել այլ ուղիցի իմ աշխատանքովս ազգիս: Հայաստանի այլ եւս ինձ անհնար է թուում...)

Չորհուրդի է երբ զգում ես, որ քեզ հետ միասին միւսնոյն գործի անունով գնացող քեզանից աւելի յանուն գործի բողոք պատողներին կաշու տակ մի փարիսեցի, մի պարագիտ, մի իսալագող է... Դրանից աւելի ծանր, աւելի յուսահատեցնող ոչ մի զգացում չի կարող լինել... Հազար երանի Սերմիջեանին. Սոյո-հանովին, Սօքօլին... հանգստացել են... իսկ մե՞նք... արա՛ աշխատի՛ր, շան նման օրական 40-50 փարսով ապրիր, կորցրու ասողութիւնդ, ապագադ կախաղանի պայտան աչքերովդ տես եւ... կրկին հայտնաբեր, օտեւանութեան Ենթակիւնը... Եւ այն էլ ո՞ւմ կողմից, նրանց, որոնց սիրտը եթէ քննես, կէտը նւապատակի կէտն էլ խաչագողի կը լինի՛: Այո՛, ծաւր է, զա՛ռն, չափազանց աղի... Հազար փոստ որ Բագու եղածը ժամանակը չիմ իմացել, որ գոյի, տեսնուէինք երեւակայի, նոյն իսկ այն արիս-բացասական տպար—Մարտիրոս Մարգարեանը այս ու այն աղայի մի քանի հազարները շատացնելու համար հաշիւ քաշող Մարտիրոսն անգամ հայտնից որ եւ անձա՞ձայն էլ եմ Բենիկի նման մարդու ձեռքի

տակ ուսուցիչ լինելու...

Երիտասարդի ձեռքով այստեղի մի հրուզի խայտառակ գործը տեղի ունեցաւ... իսկ կողքին մենք բէխաբար... որովհետեւ դուր չընք եկել գեներալներին...

Ո՞վ լա՛ւ ես ըմբոնում բոլոր ակնարկներս;

Մինչև իսկ ուղարկածդ բոլոր ներս չեն հասցել ինձ... (Գեակատ «Օն րէնէկադ») Այստե՛ր քանցիլ... Չկայ արրութիւն, չկայ անձնագրութիւն, այլ լոկ հացի խնդիր է դառել ամէն ինչ: Մի քիչ մաքուր արկերը թողնում նեռանում են, միտում են ավատութիւնները, կամ ուրիշ ասպարիզում ոչնչութեան դատարարութեւն համար ստեղծածները... Մաւալի է, մահւան չափ ցաւալի:

Ո՛չ, երեւի դեռ խնդիրը չի հասնում անցել, դեռ ժամանակը չէ, եթէ ոչ այս ամէնի մէջ գո՛չ մի մաքուր, փայլուն ու զուգեղ հոսանք կը լինէր անշուշտ եթէ չկայ, ասել է անհատները չեն սեղաւոր, այլ խնդիրը դեռ հասած չէ:

Քո ԲԱՐԱ

1903 թ. Մարտ 9

ՌՈՒՐԿՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՑՈՒՆԻՔԻ ԳՍԱՆԵՒԷԻՆԿԱՄԵԱԿԸ

1880-1905

Նիւթեր հայոց շորագոյն պատմութիւնից)

է.

(Շար. Անախ. քիւնն)

Գալով չէյնս Իւրաքանչիւրի շարժումներին՝ փաշան բոլորովին չի ծածկեց էլ չի պատասխան որ դրանք կ'տարուում էին Սուլթանի բացար-

նակով կը փորձէին սկովտական յայտնի ցաւակոտուք պար մը—ստոր ստոր նագոյն նմանութիւնը—որ Լօստոնի արտաքին թաղերու կապոյտ տափատով քօսորներուն եւ իրենց հոմանուէի յայդ աներուն յատուկ է ճանչցուած:

Փորներու եւ հակափորներու իրար բաղիտումներ, վաւաչ գիրկերից խոնուիներ, կանացի քաջնքներու անհամեմատ բարձրացումներ, կուրծքերու անհամեմատ մերկացումներ, բոլորն ալ թրքական սատուրնալիայի երեւոյթը կը պատկերացնէին երիտասարդին պարզուկ աչքերուն: Չարմաղած, անթարթ նայուածքով կը գիտէր:

Նոյն բոլորն, թեթեւ ձեռք մը ծանրանալով ուսերուն վրայ, մեղմ ձայն մը շնչաց ականձին:

—Միքելիս— (չէրի!)

Երիտասարդը զարձաւ ետին, ոչ առանց սարսուտի մը, եւ, մեծ զարմանքով, նկատեց աղջկան մը շնորհալի դէմքը իր առաջ, էլ չէ կ'անդ բարիզուէի մը բովանդակ հրապոյրը կր կրէր էն իր վրայ երկար հասակ, փոքրիկ ձուածեւ դէմք մը, թուխ աչքեր, մանկական բերան մը, իսկ տէքօղ սլուզը, կիսաբաց թեւերով, միանալով նուրբ ու ճաշակաւոր արդու գրգռին. կատարելագործած էին զինքը:

Այլայլեցաւ երիտասարդը եւ կար-

Թեւանք վերագրածներ եւ հիւպատոսը իսկոյն իր յուշատետրին մէջ արձանագրեց օրուայ բոլոր սպաւորութիւնները, Լոնդոն իր կառավարութեան հաղորդելու համար:

Շտապելով վան վերագրածները միւս օրը առաւօտեան կանուխ ճանապարհ ընկանք եւ, առանց այլեւս ճանապարհին որ եւ է տեղ կանգ առնելու, շարունակելով մեր ուղեւորութիւնը 2 օրից յետոյ հասանք անդերինս:

(Շարունակելի)

Վ Ե Ր Ջ Ո Ւ Ն Ի

Ձանազան տեղերից ստացած նամակներից, մասնաւոր և պաշտօնական տեղեկութիւններից, ինչպէս նաև արտասահմանեան և կովկասեան մամուլի էջերից ամէն օր առատօրէն շարունակում, կուսակուում են փաստեր, մէկը միւսից նորաձև, մէկը միւսից դառն ու տխուր, մէկը միւսից պէսպիսազոյն ու սարսափելի, զարհուրելի, քստմնեցուցիչ, որոնք գալիս են սպաջուցանելու, հաստատելու, այն բարոյական անկումը, փշագոմը, վատթարացումն ու այլասեռումը՝ որի մէջ ընկել է, տապկուում է, դժբախտաբար, մեր շատ տարածուն համարած կուսակցութիւնը Հ.Յ.Դաշնակցութիւնը: Ինչո՞ւ: Գնենք այդ «ինչո՞ւ» մանրամասնաբար, բազմակողմանի կերպով, խղճամիտ ուսումնասիրութեամբ՝ երկար կը լինէր: որին ես թերեւս գառնամ մի օր, եթէ «ճարտուած» էջերը ձերու զամիտ կերպով բաց լինին, իսկ այժմ կարող եմ որակել երկու բառով—որովհետեւ այդպէ՛ս են կամենում, կամ դէպի ա՛յդ մըղում այդ կուսակցութեան զեկտվարները:...

Ո՛չ ոք չի ժխտում, թէ Դաշնակցութիւնը ծաւալած մ'ի կուսակցութիւն էր՝ շնորհիւ զանազան նպաստաւոր պայմանների: Եւ որովհետեւ այդ նպաստաւոր պայմանները վերագրել են—թէ՛ մի շարք կանոնաւոր գործիչների զլաւ ճանաչումը, թէ՛ շնորհի իրար դէմ լարած թակարակներովը, թէ զեղծումների ինամիական քողարկութիւնովը և թէ՛, մանաւանդ, ուրիշ կուսակցութիւնների կրկին հրապարակ գալովը—որի համեմատ զաշնակցութիւնը՝ միակ յեղ. ասպարէզի տէրը լինելու բախտից պիտի զրկւէր—նա ծրագրեց հալածանքի, եղբայրասպանութեան, սարսափի, բռնապետութեան, պոլիցիականութեան, դատադրութեան ամէ՛ն տեսակ միջոցներ՝ ու ա՛նմիջապես դիմեց գործի այն ամէ՛ն տեղեր, ուր ինք, Դաշնակցութիւնը, իր կազմակերպութիւններն ունէր,—թէ՛ Ռուսաստան, թէ՛ Պարսկաստան,

թէ արտասահման և թէ՛ նոյն իսկ... Տաճկաստան, հայ արիւնի այդ Մայր-Հայրենիքում...:

Ս. Յ. Դաշնակցութեան անուան տակ, թագաւորում է ամէ՛ն տեղ, տէր օր, ո՛չ թէ հանդէպ դուրս ճանների, վստեքի, մատնիչների ու լրտեսների, այլ հարազատ արեւակից հայ եղբոր, ա՛յն հայի՛ որ առանց բացառութեան Դաշնակցական չէ, և մանաւանդ... Հնչակեան է...:

Եթէ կորելի լինէր մի վճակագրութիւն կազմել, դժբախտ փաստերն ու թուանշանները ա՛յն տեսակ սարսափելի իրողութիւններ պիտի պարզէին, որ ամէ՛ն մարդ պիտի տեսնէր, պիտի համոզւէր թէ ի՛նչպէս Դաշնակցութեան ձեռքով կատարւած յայտնի ու գաղտնի տէրրօր սպանութիւնների երեք չորրորդը եղբայրասպանութեան պտուղներն են...: Զորս զոհերից երեքը հայ եղբայրն էլ լինի՛ն, դձուձ ինտրիգների, եսի, շահի, քինսխնդրութեան, կուսակցամոլութեան զոհ-եղբայրն է, իսկ մէ՛կը միայն յեղի վէժխնդրութեան արժանի՝ գաւաճան մատնի՛չ...: Խոստովանեցէ՛ք թէ սա ուղղակի զարհուրելի է...:

Վերցնելուց յետոյ այդ սուսկալի թվերը շուտ մասից երեքը, կրտսերները տոյտեղ մի ուրիշ բան էլ—այդ երեքից մէկը զաշնակցականներ են, որովհետեւ կա՛մ բողոքողներ են եղել նրանց այս ու այն շնչի, այս ու այն գործի, զեղծումի՛ դէմ, և կա՛մ նոյն այդ շնչերի շնորհիւ գրեւել են ա՛յն տեսակ ընկերական պայմանների մէջ, ա՛յն տեսակ ուղղի՛ վրայ՝ որը առաջնորդել է դէպի անկում կամ մահ...:

Ես գիտեմ փաստեր, երբ այսինչը բողոքող լինելով այնինչ յմեծի, ոչեկավարի՛ դէմ, քրն. նազատող լինելով նրա այարքն ու զեղծումները, հրապարակի վրայ գրած լինելով իր սիրած կուսակցութեան անուան տակ գործւած ա՛մբողջ տգեղութիւնները, հակայեղափոխական գոյժերը, ի վերջոյ համարել է մատնիչ, ըմբոստ, դաւաճան ու ենթարկել մինչեւ իսկ ամենածանր պատժի...:

Ու այս ամենը կատարել է և կատարում է յեղափոխութեան անուան, նրա սրբազան գրօջակի տակ, որը ներկւած է հայ անձնազոհ յեղափոխականի կարմիր արիւնով, սրբազան ու մաքուր արիւնով... արիւն՝ որի մէջ մե՛ծ բաժին ունի Դաշնակցութիւնը, որը կարող է ցոյց տալ հպարտօրէն, բաց ճակատով...: Ս. Յ. Դ. դժբախտաբար, եղբայրասպանութեան, դաւաճանութեան այդ սուսկալի շրջանը սպառնական

կերպով գալիս է, կարճէք, մի արատ ձգելու այն հերոս նահատակների յաջորդ գործերի վրայ, և վրդովելու այն մաքուր խղճերը, որոնք գործում են Դաշնակցութեան դրօշի տակ...:

Զգոյժ, պարունե՛ր, ամէ՛ն բաժակ լեցւած է արգէն, ամէ՛ն շուփ ու սահման անցած...: Դուք որ ձեր եսին, ձեր փառքին, ձեր շահին խաղալիք էք դա՛մբել մի կուսակցութիւն և անխնայօրէն շահագործում էք նրա նահատակները, փառքը, անունը—դուք պատճառ պիտի դառնաք այդ կուսակցութեան անկմանը...: Զի՛ զօրինակ՝ Հնչակեան կուսակցութիւնը 1896—1903...:

Ես ի՛մ այս յոգւածում դաշնակցութիւն ասելով ամբողջ կուսակցութեան չէ՛ որ կանխարկեմ, այլ միայն նրա զեկտվարներին, պատասխանատուներին, որոնք պղծել են յեղափոխութեան մաքուր շեմքը, և որոնց դէմ՝ անշուշտ՝ զաշնակցական գիտակից, անկեղծ, մաքուր ընկերները հրապարակ գորս պիտի գան, մարելու իրենց գործն ու կուսակցութիւնը զանազան ձրիակեր, հացկատակ, շարլատան՝ բայց զերազանցօրէն վտանգաւոր անձնաւորութիւններից...: Ս. փսո՞ս է դաշնակցութիւնը, շատ աստու...: Շտապեցէ՛ք ձեր մաքրագործումը դերին, թէ չէ՛ շատ պիտի զղջաք...:

Վերջ գտնելու չե՞ն, միթէ, այս ամբողջ խայտառակութիւնները...:

ԿՐԱԿՈՏ

5 Յուլիս (ն. տ.) 1906

Ս Ջ Ղ Ա Յ Ի Ն Ք Ր Ո Ն Ի Կ

Թիֆլիզ հաւաքուած հայ ու սուցչական համագումարը որոշած է Հայրիկին զօրափիզ հանդիսանալ անոր սպառնական բարենորոգումներուն վերաբերմամբ և այդ մասին հեռագրած է ձերունի կաթողիկոսին: Եւ ուսով էլ միաձայն մէջ տեղի պիտի ունենայ հայ պատգամաւորական ժողով մը որ պիտի զբաղի եկեղեցական և դպրոցական գործերու կարգադրութեան խնդիրներով:

—Վերջին «Հնչակ»ի մէջ կրկարգանք Հ. Կ. վարչ. բանակցութեանց մանրամասնութիւնը զաշնակցական ձեռնհաս համարւած մարմիններու հետ, եղբայրասպանութեանց առջեւ առնելու համար: Հակառակ զաշնակցական մարմիններու խոստումին՝ սպանութիւններու առջեւ առնել, սպանութիւնները աւելի կը շատնան:

—Բարիզէն զաշնակցական ուսանող մը կը գրէ մեզ. «Ոչ մի նորութիւն փարիզում. բացի մի

փոքրիկ յառաջադիմութիւնից զաշնակցական ուսանողների մէջ. շուտով լոյս կը տեսնի զաշնակցական ուսանողների օրգանք. «նոր ժամանակ», անուամբ, Արամ Առաքի խմբագրութե մը և լինելու է երկշաբաթաթիւրի: Եւ Յաջողութիւն կը մ'զիտնք և կը յուսանք որ Արամ Առաքի թերթը լաւ պիտի վարէ, «նոր ժամանակ»ի գրական պահանջներուն համեմատ. մանաւանդ որ ինքերկար ժամանակներ «Դրօշակ»ի և «Հայրենիք»ի խմբագրութեան մէջ աշխատած ըլլալով թէ փորձուած և թէ ներկայ պահանջները բարձրած պիտի ըլլայ ու իր ուղղութիւնը դրականութեամբ պիտի տարբերի թէ «Դրօշակ»էն և թէ «Հայրենիք»էն. հակառակ պարագային պէտք մը չը կար հեռանալ այդ երկու թերթերէն և նոր թերթ մը հիմնել:

Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Վառնայի պուլկար քաղաքացիները զրաւեցին յունաց նիքօլա եկեղեցին, ինչպէս նաև Բարաշեվա նիքօլայի հիմնած հիւանդանոցը. որ մինչեւ օրս յունաց տրամադրութեան տակ էր: — Սօֆիայի մէջ քանի մը սպանութիւններ տեղի ունեցած են. տեղական մամուլը շատ յուզուած է և կը պահանջէ խստիւ հալածել մեղաւորները. ոմանք կը կարծեն թէ Մակեդոնացի յեղափոխականներն գործ է: Սակայն այդ լուրը չի հաստատուեր:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Սուլիսանը յանձնախումբ մը կազմել տուած է Հայոց Պատրիարքի պահանջները ուսումնասիրելու համար: Պարզ է որ փոշի փչելու համար է: — Յունաց Պատրիարքը Բարձր. Դրան գիմած է որ պուլկար էքզարկութիւնը Պօլսէն տեղափոխուի, քանի որ պուլկարները մերժած են ընդունիլ Վառնայի յունաց առաջնորդ Նէօֆիթօս եպիսկոպոսը:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Իսթեթիկական և արտաքական լրագիրներու կը հաղորդեն որ Մարտի ընտանիքով միասին վտանգի մէջ է: Կը կարծուի որ կայսերական ընտանիքի դէմ զաւազրութիւն մը կայ:

Յարը երէտփոխական ժողովի նիստերը փակելու և նախարարական փոփոխութեան ուքալը արգէն ստորագրած է: Մեծ քանակութեամբ զօրք եկած է Բեթերպուրկ, օտար զեսպաններուն յայտարարուած է զգոյշ մնալ և փողոցները շփալալ: